


Հաստատում են  
Վայոց ձորի մարզպետարանի  
Ներքին աուդիտի բաժնի պետ

 Վ. Կարապետյան

**Ա Ո Ւ Դ Ի Տ Ի Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

25.06.2015թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 18.06.2015թ.-ի թիվ 76 կարգադրությունը, «Արենի» ԱԱՊԿ ՓԲԸ-ում անցկացվեց 2014թ.-ի գործունեության ֆինանսական ներքին աուդիտ, ներքին աուդիտի բաժնի ներքին աուդիտորներ՝ Ն.Կարապետյանի և Հ.Ավետիսյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին ՓԲԸ-ի տնօրեն՝ Ա.Մկրտչյանը և հաշվապահ՝ Ի.Սայադյանը: **Աուդիտի հիմնական ուղղությունները.**

ա/Ներկայացված հաշվետվություններում և ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում.

բ/ Ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում.

գ/ Հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգում.

դ/Գնումների համապատասխանությունը «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջներին.

ե/ Ակտիվների գույքագրման, առկայության համապատասխանության ստուգում:

**Ընդհանուր տվյալներ.**

**Աշխատանքները կատարեցին՝ Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսյանը: Ունեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն, ֆինանսական վերահսկողության փորձ, ներքին աուդիտորի երկու տարվա աշխատանքային փորձ:**

«Արենի» ԱԱՊԿ Փակ բաժնետիրական ընկերություն՝ գ. Արենի: **Գործունեության նպատակը՝** բնակչության առողջության առաջնային պահպանում:

Ընկերությունը ստեղծվել է 08.04.1999թ. համաձայն Վայոց ձորի մարզպետի թիվ 35 որոշմամբ անվանվելով «Արենի առողջության կենտրոն» ՊԲԸ: Վայոց ձորի մարզպետի 18.01.2008թ թիվ 01 որոշմամբ անվանափոխվել է «Արենի» Առողջության առաջնային պահպանման կենտրոն ՓԲԸ: Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1100 հազ. դրամ, որը կազմում է 1100 սովորական անվանական բաժնետոմս: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1000 դրամ: Ընկերությունն ունի ՀՀ զինանշանի պատկերով իր անվանմամբ կլոր կնիք, բանկային հաշիվ և անհատականացման այլ միջոցներ, ՀՎՀՀ- 08905823:

Հաշվապահական հաշվառումը վարվում է գլխավոր հաշվապահի կողմից:

Հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքով սահմանված հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվությունների կազմելու սկզբունքները պահպանված են:

Գրանցումները կատարվում են սկզբնական հաշվառման տվյալների հիման վրա՝ շրջանառության տեղեկագրում: Իրականացվում է անալիտիկ և սինթետիկ հաշվառում:

Դրամարկղային գործունեությունը իրականացվում է ՀՀ կառավարության 08.10.2003թ. N1408-Ն որոշման համապատասխան՝ (դրամարկղային գործառնությունների իրականացման կարգը հաստատելու մասին): Գանձապահի հետ կնքվել է նյութական պատասխանատվության վերաբերյալ պայմանագիր:

Ներկայացվել է ՀՀ օրենքներին ու այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան ֆինանսական, վիճակագրական և հարկային հաշվետվություններ:

Հաստատված են ընկերության հաստիքացուցակները և ծախսերի նախահաշիվները/առ 01.01.2014թ. և առ 01.07.2014թ./:

Ընտրանքային կարգով համադրեցինք գույքացուցակներով արտացոլված և առկա գույքը, ինչպես նաև դեղորայքի առկա մնացորդը և մատյանում հաշվառված տվյալները: Անհամապատասխանություններ չհայտնաբերեցինք:

**Կազմակերպությունում ռիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը**

Ըստ ձեռք բերած տվյալների ռիսկը և ներքին վերահսկողությունը գնահատելու համար հիմք ենք ընդունել ԾՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ստանդարտը: Հաշիվների մնացորդների և գործառնությունների դասերի կտրվածքով ապրանքա-նյութական արժեքների հնարավոր կորստի ու յուրացման վրա: Ներքին վերահսկողությանը բնորոշ սահմանափակումների կտրվածքով՝ ներքին վերահսկողության համակարգում խաբեության առկայության հնարավորությունը կազմակերպության ղեկավարության անդամների կամ աշխատողների կազմակերպության ներսում կամ այլ կողմերի միջև գաղտնի համաձայնության գալու հնարավոր լինելու վրա:

Հաշվապահական հաշվառման համակարգի վերաբերյալ բավարար պատկերացում կազմելու, ճանաչելու համար ուշադրություն է դարձվել հաշվապահական հաշվառման գրանցումների, ֆինանսական հաշվետվությունների, հաշիվների և օժանդակող փաստաթղթերի արժանահավատությանը: Վերահսկողության ռիսկի նախնական գնահատումը թույլ է տալիս եզրահանգելու, որ կազմակերպության հաշվապահական հաշվառումը բավարար է գործել, ներքին վերահսկողության համակարգը՝ նույնպես բավարար:

« պետական բյուջեի պարտքերի վերաբերյալ հաշվետվություն 2014թ.

Անվանումը	Նախատեսված	Ֆինանս.	հազ.դրամ				Շեղում
			Դրամարկ. ծախս ըստ հաշվետ.	Դրամարկ. ծախս ըստ աուդիտի	Փաստ. ծախս ըստ հաշվետվ.	Փաստ. ծախս ըստ աուդիտի	
Ընդամենը ֆինանսավորում	28043.4	30627	29511.9	29511.9	31869.2	31868.9	3825.5
Ընդամենը ընթացիկ տարվա նախահաշվով նախատեսված	28043.4	26969.2	29511.9	29511.9	29808.2	29807.9	1764.5
Աշխատավ. և աշխատ. հավասար. այլ վճարներ	22493		22406.3	22406.3	22770	22770	277
Պարտադիր սոց. ապահով. վճարներ							0
Ապրանքների գնման և ծառայ. վճարման ծախս. որից	5550.4		7105.6	7105.6	7038.2	7037.9	1487.5
Գրասենյակային նյութեր և հագուստ	435		425	425	425	425	-10
Կենցաղ և հանրային սննդի նյութեր							0
Դեղորայք և լաբորատոր նյութեր	2540		2527.5	2527.5	2540.5	2540.5	0.5
Այլ ծախսեր	467		992.2	992.2	910.8	910.8	443.8
Գործառնական և բանկ.ծառ. ծախսեր	50		45.5	45.5	45.5	45.5	-4.5
Ներքին գործուղումներ	48		44	44	44	44	-4
Կապի ծառայության վճարներ	500		464	464	464	464	-36
Կոմունալ ծառայությունների վճար	1438.4		1545.4	1545.4	1546.4	1546.1	107.7
Էլ. էներգիայի ծախսեր	550		610	610	611	610.7	60.7
Վառելիքի և տրանսպորտային ծախսեր	750		750	750	750	750	0
Ջրնուղ կոյուղուց օգտ. վարձի վճար.							0
Այլ ծախսեր	138.4		185.4	185.4	185.4	185.4	47
Ընդհանուր բնույթի այլ ծառայ.	72		1062	1062	1062	1062	990
Ամորտիզացիա					2061	2061	2061
Տարեսկզբի դրամ. միջոցների ազատ մնաց.		1373.8					0
Վճարովի ծառայութ.		1338					0
Այլ եկամուտներ		946					

Դեբիտորների և Կրեդիտորների հաշվառման աղյուսակ

	Աշխատավարձ և դրան հավ. այլ վճար.		Սոց ապահ. վճարներ		Կապի ծառայութ.		Էլ էներգ. ծախսեր.		Եղեգնածորի ԲԿ ՓԲԸ		Այլ Դեբիտ. և Կրեդիտ պարտքեր		Ընդամենը	
	D	K	D	K	D	K	D	K	D	K	D	K	D	K
ՍՈ.01.01.1 ք.													0.0	0.0
Շրջանառություն 201 ք.													0.0	0.0
ՍՈ.01.01.14ք.	400.0						39.2			72.4	4.0		443.2	72.4
Շրջանառություն 2014ք.	22406.3	22770.0			464.0	464.0	610.0	610.7	447.0	374.6	5584.6	5588.6	29511.9	29807.9
ՍՈ.01.01.15ք.	36.3						38.5						74.8	0.0

Շահութահարկի և շահաբաժնի գծով պարտավորությունները աղյուսակում չեն արտահայտվել, քանի որ նշված պարտավորությունները, որպես ծախս չեն դիտվում: Այդ պարտավորությունների գումարը կազմում է 137.0 հազ. դրամ, որը արտացոլվել է հաշվեկշռում, որպես ընթացիկ պարտավորություն: Միաժամանակ ընկերությունը շահութահարկի և շահաբաժնի գծով ունի գերավճար 31.0 հազ. դրամ, որը նույնպես արտացոլվել է հաշվեկշռում, որպես դեբիտորական պարտք:

հազ.դրամ

Ակտիվ	Տարեվերջի դրությամբ ըստ հաշվետվության	Տարեվերջի դրությամբ ըստ աուդիտի	Ծեղում
Ոչ ընթացիկ ակտիվներ որից	37761	37761	0
հիմնական միջոցներ			0
մն.արժ.	37761	37761	0
արժեքը	37761	37761	0
մաշվածություն			0
Ընթացիկ ակտիվներ որից	2617	2616	-1
Նյութեր	975	932	-43
փոքրարժեք և արագամաշ առարկաներ			0
մն.արժ.	464	464	0
արժեքը	464	464	0
մաշվածություն			0
կարճաժամ. դեբիտ. պարտքեր	69	105	36
որից հաշ. տրված կանխ.վճ.գծ.			0
հաշվ. գնորդ. և պատ. հետ			0
Հաշվ. սոց. ապահ. և ապահովության գծով			0
Հաշվարկներ անձնակազմի հետ			0
Հաշվարկներ անձնակազմի հետ նյութական վնասի հատուցման գծով			0
հաշվարկներ բյուջեի հետ	31	67	36
հաշվարկներ հաշվետու անձանց հետ			0
հաշվ տարբ. դեբիտ. հետ	38	38	0
դրամական կանխավճարներ, որից	1109	1115	6
դրամարկը			0
հաշվարկային հաշիվ	1109	1115	6
Հաշվեկշիռ	40378	40377	-1
Պասիվ			0
Սեփական կապիտալ որից`	40240	40240	0
Լրացուցիչ կապիտալ	38591	38591	0
Հաշվետու տար. չօգ. զուտ շահ.	963	963	0
Նախ. կար. չօգ. զուտ շահ.	686	686	0
Եկամ. վերաբ. շնորհ.			0
Կարճ. ժամկ. կրեդ. պարտքեր	138	137	-1
այդ թվում			0
հաշվարկ. մատակ. և կապալ. հետ			0
հաշվարկներ բյուջեի հետ	138	137	-1
Հաշվ. սոց ապահ. և ապահով. գծ.			0
այդ թվում տույժեր և տուգանքներ			0
Հաշվարկներ անձնակազմի հետ եկամուտների վճարման գծով			0
հաշվարկներ տարբ. կրեդիտորների հետ			0
հաշվարկներ հաշվետու անձանց հետ			0
Կարճ. ժամկ. այլ պասիվներ որից	0	0	0
զախիք ժաման. եկամուտներ			0
Հաշվեկշիռ	40378	40377	-1

Մեր կողմից աուդիտի արդյունքներով կազմվել է հաշվեկշիռ, որը հիմք է տալիս եզրակացնելու՝ հաշվեկշիռը տալիս է կազմակերպության հաշվեկշռի ճշմարիտ և իրական պատկերը:

**Դրամական միջոցների հոսքերի մասին  
հաշվետվություն**

առ. 01.01.2014թ. - առ 01.01.2015թ.

Ձև N 4

հազ.դրամ

Ցուցանիշների անվանումը	Տող	Գումարն ըստ հաշ.	Գումարն ըստ աուդիտի տվյալների	Շեղում
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	010	1373.8	1373.8	0.0
գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր				
Արտադրանքի աշխատանքների, ծառայությունների իրացումից	020	26969.2	26969.2	0.0
Ապրանքների իրացումից	030			0.0
Ընթացիկ այլ ակտիվների իրացումից	040			0.0
Ստացված կանխավճարներից	050			0.0
Կարճաժամկետ ֆինանսական ներդրումների դիմաց հաշվարկված եկամուտներից	060			0.0
Գործառնական այլ գործունեությունից	070	2284.0	2284.0	0.0
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	080	29253.2	29253.2	0.0
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր				
Չեռք բերված արտադրական պաշարների դիմաց	090			0.0
Ապրանքների ձեռք բերման դիմաց	100			0.0
Կատարված աշխատանքների մատուցված ծառայությունների դիմաց	110	7105.6	7105.6	0.0
Տրված կանխավճարներ	120			0.0
Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների դիմաց	130	22406.3	22406.3	0.0
Սոցիալական ապահովագրության և ապահովության նպատակով	140			0.0
Առհաշիվ տրված գումարներ	150			0.0
Վճարումներ քույր ե	160			0.0
Գործառնական այլ գործունեության նպատակով	170			0.0
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	180	29511.9	29511.9	0.0
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	190	-258.7	-258.7	0.0
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ		1115.1	1115.1	0.0

Այս կողմից դրամական հոսքերի աուդիտ է իրականացվել, որը հիմք է հանդիսանում կազմակերպության կողմից ստացված եկամուտների և կատարված դրամական ծախսերի վերաբերյալ ճշմարիտ կարծիք կազմելու համար:

Կատարվել է ընկերության ֆինանսական գործունեության վերլուծություն 2013թ. հաշվեկշռի տվյալների հիման վրա հետևյալ ցուցանիշների միջոցով.

1. Ֆինանսական անկախության գործակից.

$$Q_1 = \frac{\text{սեփական կապիտալ}}{\text{հաշվեկշռի հանրագումար}} = \frac{40240}{40377} = 1.0$$

Այն ցույց է տալիս թե ընկերության ընդհանուր միջոցների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի հաշվին: Այն բավարարում է այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը՝ (0.5):

2. Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության գործակից, որը ցույց է տալիս թե սեփական կապիտալի միավորի հաշվով որքան պարտավորություն ունի կազմակերպությունը:

$$Q_2 = \frac{\text{փոխառու կապիտալ}}{\text{սեփական կապիտալ}} = \frac{\text{ընթ. պարտավ.} + \text{ոչ ընթ. պարտավ.}}{\text{սեփական կապիտալ}} = \frac{137}{40240} = 0.003$$

որը չի բավարարում այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը՝ (1):

3. Ինքնավարության գործակից, որը ցույց է տալիս, թե ընկերության միջոցների որ մասն է ձևավորվել երկարաժամկետ հիմունքներով ներգրավված աղբյուրների հաշվին.

$$Q_3 = \frac{\text{սեփ. կապիտալ} + \text{ոչ ընթ. պարտավ.}}{\text{հաշվեկշռի հանրագումար}} = \frac{40240}{40377} = 1.0$$

4. Սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության գործակից.

$$Q_4 = \frac{\text{սեփ. կապիտալ} + \text{ոչ ընթ. պարտավ.} - \text{ոչ ընթ. ակտիվ.}}{\text{ընթացիկ ակտիվներ}} = \frac{2479}{2616} = 0.9$$

Այն բավարարում է նորմատիվային փոքրագույն արժեքին (0.1):

5. Ընթացիկ իրացվելիության գործակից, որը ցույց է տալիս ընթացիկ պարտավորությունների ընթացիկ ակտիվներով ապահովվածության աստիճանը.

$$Q_5 = \frac{\text{ընթացիկ ակտիվներ}}{\text{ընթացիկ պարտավորություն}} = \frac{2616}{137} = 19.1$$

Այս ցուցանիշը բավարարում է սահմանային նվազագույն արժեքին (2):

Ֆինանսական գործունեության վերլուծությունից պարզվում է, որ ընկերությունը բավարար չափով ապահովված է ընթացիկ ակտիվներով:

**Առաջարկվում է.** Համապատասխանեցնել 2-րդ ցուցանիշը ցանկալի փոքրագույն մակարդակին:

Ընկերության հաստիքային միավորների թիվը՝ 19.5:

Ընկերության աշխատակիցների թվաքանակը՝ 18 տարվա սկզբին, 19՝ տարվա վերջում:

Ընդամենը նախատեսված դրամական եկամուտներ՝ 28385.1 հազ. դրամ, փաստացի կատարում՝ 29253.2 հազ.դրամ:

Որից՝

-պետական պատվերով նախատեսված՝ 27185.1 հազ.դրամ, փաստացի կատարում՝ 26969.2 հազ. դրամ:

-վճարովի ծառայություններ՝ նախատեսված՝ 1200.0 հազ. դրամ, փաստացի կատարում՝ 1338.0 հազ. դրամ: Նախորդ բյուջետային տարվա նկատմամբ մուտքերը ավելացել են 707.4 հազ.դրամի չափով:

- այլ եկամուտներ՝ նախատեսված չէ, փաստացի՝ 946.0 հազ.դրամ/դրամաշնորհ սպասարկվող գյուղապետարանների կողմից/:

- տարվա սկզբի դրամական մնացորդ՝ 1373.8 հազ.դրամ:

- տարվա վերջի դրամական մնացորդ՝ 1115.1 հազ.դրամ:

01.01.2015թ.-ի դրությամբ ընկերության դեբիտորական պարտքը կազմում է 105.0 հազ. դրամ:

01.01.2015թ.-ի դրությամբ ընկերությունը ունի 103.0 հազ.դրամ կուտակված կրեդիտորական պարտքեր, որը դրամական ազատ միջոցներով ամբողջությամբ ապահովված է: Ընկերությունը աշխատել է 342.2 հազ.դրամ շահույթով: Նախորդ աուդիտի ժամանակահատվածում ընկերությունը ունեցել է 452.8 հազ.դրամի շահույթ:

<<Արենի>> ԱԱԴԿ ՓԲԸ-ում ըստ հաշվետվության, եկամուտների 92.2 տոկոսը ձևավորվել է պետական պատվերի շրջանակներում, 7.8 տոկոսը գոյացել է վճարովի ծառայություններից: Ծախսումներում աշխատավարձի և աշխատավարձին հավասարեցված այլ վճարների տեսակարար կշիռը կազմում է 71.4 տոկոս, անցած ժամանակահատվածի 72.9 տոկոսի դիմաց/ողջամիտ ծախս է համարվում միջինը 70 տոկոս միջակայքը/, դեղորայք և լաբորատոր նյութեր հոդվածով 8.0 տոկոս, այլ ծախսերը՝ 20.6 տոկոս:

Իրականացվել է դեղորայքի և վիրակապական նյութերի և բենզինի գնումների գործընթացի համապատասխանության աուդիտ և կատարողականի աուդիտ:

Համապատասխանության աուդիտ: Գնման գործընթացը ներառում է գնումների պլանավորումը, գնումների նախապատրաստումը, պայմանագրի կնքումը: Առկա է գնումների պլանը, որը սահմանված կարգով կազմվել է և ներկայացվել <<Վայոց ձորի մարզպետարան:

Գնումների նախապատրաստում: Սահմանվել է գնումները իրականացնել ՇՀ գնման ընթացակարգով:

Գնումների նախապատրաստման համար մարմնի ղեկավարը սահմանել է գնումների համակարգող,

պատասխանատու ստորաբաժանում, գնահատող հանձնաժողով: Ամբողջությամբ կիրառվել է <<

կառավարության գնումների գործընթացի կազմակերպման մասին 168-Ն որոշման 3-րդ գլխի 13-րդ մասի

պահանջները: Հանձնաժողովը իր առաջին նիստում հաստատել է հրավերի տեքստերը: ՇՀ-ում ներառված

բոլոր հնարավոր մասնակիցներին ուղարկվել է գնման հրավեր, որում ներառվել են ապրանքների

տեխնիկական բնութագրերը, անվանացանկը: Սահմանված կարգով գնման հայտ են ներկայացրել 3

ընկերություն՝ <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ն, <<Վազա Ֆարմ>> ՍՊԸ-ն, <<Լամբրոն Ֆարմինպրեքս>>

ՍՊԸ-ն: Հայտերը գրանցվել են գրանցամատյանում: Հայտերի բացման օրը և ժամին հայտերը բացվել են

գնահատող հանձնաժողովի նիստում: Հանձնաժողովը արձանագրել է նշված ընկերությունների կողմից

ներկայացված գնային առաջարկները: Գնային առաջարկները գնային նվազագույն առաջարկի

սկզբունքով ըստ չափաբաժինների նշված ընկերությունները ճանաչվել են հաղթող ընկերություն, կազմելով

համապատասխան արձանագրություն: Հաղթող ընկերություններին ուղարկվել է համապատասխան

գրություններ, հաղթող ճանաչվելու մասին պայմանագիր կնքելու համար, կցելով պայմանագրի նախագիծը,

միակողմանի տուժանքի պայմանագրի առկայության պայմաններում: Ընկերությունների կողմից

ներկայացվել է տուժանքի պայմանագիր, կնքվել են համապատասխան գնման պայմանագրեր:

Կատարողականի աուդիտ:

Գնումներ իրականացնելու համար կազմվել են գնման և վճարման ժամանակացույցեր:

<<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ ընկերության հետ կնքվել է 407.4 հազ. դրամի գնման պայմանագիր,

կատարվել է 353.2 հազ.դրամի գնում, <<Վազա Ֆարմ>> ՍՊԸ-ի հետ կնքվել է 1233.3 հազ. դրամի

գնման պայմանագիր, կատարվել է 1101.6 հազ.դրամի գնում, <<Լամբրոն Ֆարմինպրեքս>> ՍՊԸ-ի հետ

կնքվել է 855.6 հազ. դրամի գնման պայմանագիր, կատարվել է 707.9 հազ.դրամի գնում: Գլոբալ բյուջեի

պակասեցմամբ պայմանավորված, պայմանագրերով նախատեսված գնումները չեն կատարվել 333.6

հազ.դրամի չափով: Մատակարար ընկերությունների հետ փոխադարձ համաձայնությամբ, գնման

պայմանագրերի մասնակի չկատարումը իրավական և ֆինանսական հետևանքների չի հանգեցրել:

Սահմանվել և իրականացվել է բենզինի գնումը ՇՀ գնման ընթացակարգով: Մրցույթը կայացել է տարեկան

կտրվածքով: Գնման ընթացակարգին մասնակցելու համար հայտ է ներկայացրել <<Ֆլեշ>> ՍՊԸ

ընկերությունը: Մրցույթի արդյունքներով հաղթող է ճանաչվել <<Ֆլեշ>> ՍՊԸ 450 դրամ մեկ միավոր

գնային առաջարկով: Կնքվել է 1660լ բենզինի գնման պայմանագիր 750000 դրամ ընդհանուր գումարով:

Վայոց Ձորի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի ներքին աուդիտորներ՝ Ն.Կարապետյանս,

Հ.Ավետիսյանս իրականացրեցին <<Արենի>> ԱԱԴԿ Փակ բաժնետիրական ընկերության 2014թ.-ի

բյուջետային տարվա ֆինանսական աուդիտ առ 01.01.2015թ. դրությամբ: Հաշվապահական հաշվեկշռի և

ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատվություն է կրում կազմակերպության

ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք



Ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ: Աուդիտն անցկացրեցինք աուդիտի ազգային ստանդարտներին և գործնական փորձին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորենք և իրականացնենք, որպեսզի ունենանք ողջամիտ հավաստում, որ ֆինանսական հաշվետվությունները և հաշվապահական հաշվառման փաստաթղթավորումը և ձևակերպումները արժանահավատ են, էական խեղաթյուրումներից զերծ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքները:

Մեր կողմից կատարվել է կազմակերպության հաշվապահական հաշվառման ուսումնասիրություն, ֆինանսական և գործառնական տեղեկատվության ստուգում, տնտեսական գործունեության նվազագույն ծախսերով իրականացման ուսումնասիրություն, ինչպես նաև օրենքների այլ իրավական ակտերի, կազմակերպության ղեկավարության քաղաքականության, հրահանգների և ներքին այլ պահանջների ուսումնասիրություն: Իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմվել են սահմանված ձևով ֆինանսական հաշվետվությունների հիմունքների պահանջներին համապատասխան: Ընկերության ֆինանսական հաշվետվությունների տվյալների արժանահավատությունը գնահատվել է աուդիտի արդյունքներով, որը արտահայտվել է աուդիտի հաշվետվության մեջ:

#### **Արձանագրված թերություններ և խախտումներ:**

Էներգետիկ ծառայություններ հողվածով նախահաշվային գումարից ավել է ծախսվել 60.0 հազ.դրամ:

Աուդիտի է ենթարկվել պետական պատվերի շրջանակներում իրականացված բժշկական ծառայությունների արժանահավատությունը:

Գլոբալ բյուջեով նախատեսվել է սպասարկել 5960 բնակիչ, փաստացի իրականացվել է 5960 բնակչի սպասարկում. որից մեծահասակներ՝ 4604 բնակիչ, մինչև 18 տարեկաններ՝ 1356 բնակիչ: 01.07.2014թ.-ից <<ՄԻԴԱՍ>> տեղեկատվական համակարգի տվյալներով սպասարկվել է 4813 բնակիչ, որից մեծահասակներ՝ 3914 բնակիչ, մինչև 18 տարեկաններ՝ 899 բնակիչ: Բնակչության թվի կտրուկ նվազումը պայմանավորված է <<ՄԻԴԱՍ>> տեղեկատվական համակարգում բնակչության գրանցումների ճշգրտումներով /քանի որ համակարգը հեռացրել է կրկնակի և սխալ գրանցումները և ոչ բոլոր բնակիչներն են գրանցված/: Միջինը սպասարկվել է 5387 բնակիչ: Մեր կողմից հաշվառվել է 5743 քարտ, որից մեծահասակներ՝ 4506 քարտ, մինչև 18 տարեկաններ՝ 1237 քարտ: Ավել սպասարկում է ցույց տրվել 217 բնակչի հաշվով, որը վեց ամսվա կատարողականով կազմում է 1302 բնակիչ՝ գումարով 201810 դրամ:

Կատարեցինք բնակիչներին ընտանեկան բժիշկների կողմից այցելության կամ տեղում սպասարկման վերաբերյալ բժշկական քարտերում գրանցումների առկայության ընտրանքային աուդիտ: Պարզեցինք, որ մեծահասակների քարտերի 70 ընտրանքում 34 քարտում առկա չէ սկրինինգի գրանցում, որը կազմում է ընտրանքի 48.6 տոկոսը, այսինքն, 2190 մեծահասակի ամբուլատոր քարտերում գրանցում չի կատարվել, կամ գրանցված բնակիչներին բժշկական սպասարկման ծառայություններ չեն իրականացվել, որի արժեքը կազմում է 642984 դրամ: Նախորդ աուդիտի հաշվետվությամբ այն կազմել է 95.4 տոկոս:

Կատարեցինք մեծահասակներին ընտանեկան բժիշկների կողմից փաստացի սպասարկման վերաբերյալ ընտրանքային հարցումներ (հեռախոսազանգի միջոցով): Պարզեցինք, որ 15 մեծահասակ բնակիչներից 1 հոգի ընտանիքով ապրում է արտերկրում, 2 բնակիչ չգիտի, թե ով է իր ընտանեկան բժիշկը, 4 բնակիչ գրանցված են մի ընտանեկան բժիշկ մոտ, սակայն նշում են մյուս թերապևտի անունը: Այսպիսով, նշված ընտրանքից 3 մեծահասակ բնակիչ չի սպասարկվել տեղամասային թերապևտի կողմից, որը կազմում է 20 տոկոս: 901 գրանցված մեծահասակ բնակիչներին բժշկական սպասարկման ծառայություններ չեն իրականացվել, որի արժեքը կազմում է 264534 դրամ:

Կատարեցինք մինչև 18 տարեկան բնակիչների բժշկական սպասարկման ծառայությունների իրականացման աուդիտ: 14-15 տարեկանների 28 բժշկական քարտերում առկա են պատվաստումները, սակայն բացակայում են վերջին տարիների չափորոշիչով սահմանված սկրինինգային գրանցումները և նեղ մասնագետների հետազոտության արդյունքները:

Կատարեցինք նախագորակոչային տարիքի քաղաքացիների /16-18 տարեկան/ բժշկական ամբուլատոր քարտերի և դրանցում բժշկական հետազոտությունների արդյունքներով լրացված առողջության անձնագրերի ստուգում: Նշված աշխատանքներին ընդգրկվել է մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերով վարչության պետի տեղակալ Ս.Շահբազյանը: Առողջության անձնագրերում բացակայում են նեղ մասնագետների կոնսուլտացիոն գրանցումները, որոնք լրացվել են

գինկումիսարիատի բժշկական հանձնաժողովի հետ համատեղ աշխատանքի արդյունքում: Այսպիսով, ՀՀ կառավարության 10 հուլիսի 2008թ. N 748-Ն որոշման պահանջները թերի են կատարվել /կից ներկայացվում է Տեղեկանք ՎՁՄ-ի Առողջապահության և սոցիալական հարցերով վարչության պետի տեղակալ Ս.Շահբազյանի կողմից/:

Չի կատարվել Առողջապահության նախարարի 13 սեպտեմբերի 2013թ. N47-Ն հրամանի 16-րդ կետի պահանջները, որով սահմանվում է, որ ընտանեկան բժիշկը, առնվազն ամիսը մեկ անգամ, համաձայն տվյալ բժշկական կազմակերպության տնօրենի հրամանով հաստատված ժամանակացույցի, պարտավոր է այցելություն կատարել իրենց ընտրած կամ կցագրված գյուղական համայնքներ և տեղում (բուժակմանկաբարձական կետում) կատարել բնակչության ընդունելություն: Բժշկի այցելության փաստը վավերացվում է գյուղական համայնքի ղեկավարի ստորագրությամբ և կնիքով: Ամբողջ ծավալով չի կատարվել ՀՀ կառավարության 30.03.2006թ.-ի թիվ 420-Ն որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները, որով սահմանվում է, որ ԱԱՊ բժշկի մոտ բնակչի գրանցումը սահմանված ընթացակարգով ԱԱՊ բժշկի կամավոր ընտրության հիման վրա կատարվող փաստաթղթային և էլեկտրոնային ձևակերպումն է, որի հիման վրա ԱԱՊ բժիշկը բնակչին մատուցում է պետության կողմից սահմանված ծավալներով որոշված ԱԱՊ ծառայություններ, կազմակերպում առաջնային բուժօգնության այլ ծառայություններ և ստանում համապատասխան ֆինանսավորում: Ամբողջ ծավալով չի կատարվել 12-րդ կետի պահանջները, որով սահմանվում է, որ ՀՀ քաղաքացին իր կողմից ընտրված ԱԱՊ բժշկի մոտ գրանցվելու համար ներկայացնում է իր անձնագիրը, իսկ մինչև 16 տարեկան երեխայի համար՝ նրա ծննդյան վկայականը, իսկ սոցիալապես անապահով կամ հատուկ խմբին պատկանելու դեպքում՝ նաև այդ փաստը հավաստող փաստաթուղթը: ԱԱՊ բժիշկը կարող է գրանցել իրեն ընտրած բնակչին ԱԱՊ հաստատությունում /բնակչի այցելության ժամանակ/ կամ կանխարգելիչ, վերականգնողական, բուժական միջոցառումներ իրականացնելու նպատակով նրա մշտական բնակության կամ այլ վայր կատարած այցի ընթացքում:

Չի կատարվել ՀՀ առողջապահության նախարարի 24.09.2008թ.-ի թիվ 17-Ն հրամանի պահանջը: Բացակայում է ամբուլատոր քարտերի շարժի հաշվառման մատյանը:

Դեղորայքի դուրս գրումը իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարության 26-փետրվարի 2002թ.-ի N100 հրամանով հաստատված ՀՀ-ում դեղատոմսերի դուրս գրման և դեղերի բաց թողնման կարգի պահանջների խախտումներով: Դեղատոմսերի հաշվառման համար վարվող մատյանում գրանցումները կատարվում են 1 ամսվա կտրվածքով, այնինչ պետք է գրանցվի յուրաքանչյուր դեղի դուրս գրման համար: Բացակայում են հեթական համարը, ամիսը, ամսաթիվը, հիվանդի Ա.Ա.Հ., ամբուլատոր քարտի համարը, զեղչի կամ տոկոսի չափը, դեղատոմսի բովանդակությունը և հիվանդի ստորագրությունը: Բուժակ մանկաբարձական կետերը ամսական կտրվածքով դեղորայքի և վիրակապական նյութերի շարժի հաշվետվություններ չեն ներկայացնում, Ռինդ համայնքի ԲՄԿ-ում բնակիչներին անվճար դեղորայքի տրման մատյանում բացակայում է բնակիչների ստորագրությունները:

Եզրակացություն: Պետական պատվերի շրջանակներում հաշվետվություններով ներկայացված իրականացված ընտանեկան բժշկական ծառայությունների ծավալը ամբողջությամբ չի համապատասխանում փաստացի կատարված ընտանեկան բժշկական ծառայությունների ծավալին: Չի գործել ներքին հսկողության համակարգը: Նախորդ աուդիտի հաշվետվության հիման վրա տրվել է հանձնարարական նշված խախտումները թույլ չտալու համար, որը ամբողջ ծավալով չի կատարվել:

Համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի նշված թերությունները վերացնելու համար տրվեց համապատասխան խորհրդատվություն:

#### **Առաջարկվեց ՓԲԸ-ի տնօրենին՝**

ա/ Թույլ չտալ նախահաշվով նախատեսված գումարներից ավել ծախսումներ:




բ/ Ապահովել ներքին հսկողության համակարգի առկայություն: Պետական պատվերի շրջանակներում ընտանեկան բժշկական ծառայությունները իրականացնել ամբողջ ծավալով: Կիրառել Առողջապահության նախարարի 13 սեպտեմբերի 2013թ. N47-Ն, 24 սեպտեմբերի 2008թ.-ի թիվ 17-Ն հրամանների և ՀՀ կառավարության 30.03.2006թ.-ի թիվ 420-Ն որոշման պահանջները:

գ/ Իրականացնել հաշվառման քարտերի և հաշվառված բնակիչների ցուցակների համադրում, որը գլոբալ բյուջեն արժանահավատ կազմելու հնարավորություն կտա:

դ/ Միջոցներ ձեռնարկել ընկերությունում ընտանեկան բժշկության ոլորտը կարգավորող օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան գործունեության ապահովման համար:

Ներքին աուդիտի բաժնի ներքին  
աուդիտորներ՝

<<Արենի>> ԱԱՊԿ ՓԲԸ-ի տնօրեն՝  
Հաշվապահ՝

  
  
  
Ն. Կարապետյան  
Հ. Ավետիսյան  
Ա. Մկրտչյան  
Ի. Սայադյան